ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 117 – Ա

21 փետրվարի 2022 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԴԴՄԱՇԵՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշմամբ սահմանված հավելվածի պահանջները

որոշում եմ՝

1. Հաստատել 2022 թվականի փետրվարի 22-ին՝ ժամը 11^{00}-ին, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Դդմաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի կազմը՝ Յուրա Մուշեղյան (մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ), Լուսինե Վարդանյան (մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ), Աշոտ Կարապետյան (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի խորհրդական), Մարինե Գյարզոյան (մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի պետ), Վարդանուշ Մնացականյան (մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ), Բուրմունք Հովհաննիսյան (մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ-գլխավոր իրավաբանի պարտականությունները ժամանակավորապես կատարող), Ջանիկ Բազեյան (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի օգնական):

2. Մրցույթային հանձնաժողովի նախագահ նշանակել Ցուրա Մուշեղյանին, քարտուղար՝ Վարդանուշ Մնացականյանին:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Դդմաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի աշխատանքներին որպես դիտորդ կմասնակցի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության անձնակազմի կառավարման վարչության գլխավոր մասնագետ Դավիթ Հովսեփյանը:

4. Հանձնաժողովի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտից հետո:

ՌՈՒԲԻԿ ՆԱՎՈՅԱՆ

Подписано: NAVOYAN RUBIK 3708540077

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈՂԱՐԻՆԴՐ՝

Ռ. ՆԱՎՈՅԱՆ
Ք. Գավառ